ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆԱԿ

II

Բռնապետական, անբնական ու հնացած կարգեր են գերիշխում մեր զօրամասերում, նոյնիսկ մի քանի ղեկավարներ ձգտում են կազմակերպել մի աւտոմատիկ բանակ, անինքնասէր, անզգայ մի կոյր ոյժ, որ մի չէյթանամիտ հրամանի ազդեցութեամբ, պատրաստ լինի սուինն ուղղելու թէկուզ մայրենի աշխատաւորի սրտին... յանուն մոնարխիզմի։

Զօրքն ուժասպառւում ու այլասերւում է, այս ժողովրդի հարազատ տարրերը հնարաւորութիւն չունեն զինւորական շրջաններում մնալ առանց հալածանքի ու վիրաւորանքի։

Եւ մի բան մինչև այժմ չպարզւեց. ինչ պիտի լինի հայ զինւորը՝ ստորաքարշ, սարկական, հլու կապկային քծնանքներով երերուն մի թշւառ մեքենայ-արարած, թէ քաղաքա[illegible] քաջութեամբ օժտւած ազատ ու ինքնավստահ [illegible]ունակ մարդ-կամք։

Զպար[illegible] [illegible]ռովհետև զինւորական գործը համարւում է անմա[illegible]նքննադատելի...

Մեր [illegible]ստեսական ոյժի մաքսիմումը վառւում է բանա[illegible]ր և յանցանք է, դաւաճանական յանցանք մ[illegible]ր ժողովրդի ջարդւած ուսերին ծանրացած նման բանակի ֆիզիքական ու բարոյական վիճակի վրայ նայել մատերի արանքով։

Եթէ անհնար է յեղափոխական կարգեր մտցնել այս անիծեալ երկրում, գէթ դեմոկրատիզմն էլ այսքան վայրագ ոտնձգութեամբ չպիտի նահատակւի։

Զօրքի շարքերը խտացնում է մեր անտեսապէս ուժասպառ և հոգեպէս քայքայւած աշխատաւորութիւնը և այդպիսի զօրքը պիտի ծառայի միմիայն աշխատաւորութեան շահերին. լինի նրա հետ և ոչ նրա դէմ։

Մի զօրք, որ դաստիարակւում է սարկական մթնոլորտում, սարսափելի զրկանքների մէջ, բնականօրէն պիտի լինի ծոյլ ու վախկոտ և վտանգաւոր դէպքում դասալիք ու դաւաճան։

Ով ուզում է, որ մեր զօրքը այս և նման բարոյական այլանդակ պատկեր չներկայացնի նա չպիտի հանդուրժի բանակում տիրող բարբարոսական կարգերը։

Զօրքի շարքերից պիտի վտարել առաջ բիւրոկրատիզմի թոյնով վարակւած սպաներին ու պետերին, որոնք երէկ մեր պարտութեան պատճառների մէջ կարևոր տեղ գրաւեցին, իսկ այսօր, ակնյայտ դաւադրութեամբ ձգտում են վտանգել մեր դեմոկրատիայի ապագան։

Զինւորի անհատ-քաղաքացիական իրաւունքները պէտք է վերականգնել և պետերի վայրագ ոտնձգութիւնները սանձել։

Յեղափոխական դեմոկրատական կարգեր պիտի մտցնել բանակում, սպայի և զինւորի իրաւահաւասարութիւնը, սրբագործել և վերջ տալ զինւորական կապկութիւններին։

Առանց այսպիսի անխուսափելի բարենորոգումների անհնար է կազմակերպել բանակ, իսկ եթէ կազմակերպւի էլ նման բանակ միայն չարիք ու պատուհաս կարող է հանդիսանալ այս երկրի և ժողովրդի գլխին։

Հեռակայ ու մերձակայ արիւնոտ ու ցաւագար անակնկալներից խուսափելու համար, մեր երկրի բոլոր գործօն ոյժերի օրւայ գերագոյն նշանաբանը պիտի լինի՝ վախճան դաւադրական քաղաքականութեան,

կեցցէ յեղափոխական բանակ։